HRAYR MARGUKHIAN FOUNDATION
Հրայր Մարգուխեանի Հիմնադրամ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

7

Եվրասիական տնտեսական միության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ առևտրի գոտու ստեղծման հնարավորությունները և Հայաստանի Հանրապետության անելիքները

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական
հետազոտությունների գրասենյակ

research@arf.am | 010 52 18 90 | ք.Երևան, 0010
Մ. Մկրտչյան 12/1

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Հոկտեմբեր 2019
ԵՐԵՎԱՆ

Վերլուծությունը կատարված է
ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի կողմից՝
Արա Նռանյան
Սուրեն Պարսյան
Թադևոս Ավետիսյան
Արմեն Գրիգորյան
Կարեն Սկրտչյան

Հրայր Մարուխեան Հիմնադրամը աջակցում է վերլուծության տարածմանը

Ձևավորումն ու էջադրումը՝ Գրիգոր Հակոբյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7.

Եվրասիական տնտեսական միության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ առևտրի գոտու ստեղծման հնարավորությունները և Հայաստանի Հանրապետության անելիքները

Եվրասիական տնտեսական միությունը (ԵՍՏՄ) իր հիմնադրման պահից մեծ հետաքրքրություն է առաջացրել տարբեր երկրների մոտ: Արդեն իսկ մի շարք պետություններ՝ այդ թվում Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունը, Սինգապուրը, Սերբիան, Հնդկաստանը, Չինաստանը, Եգիպտոսը կնքել են կամ ակտիվ բանակցություններ են վարում ԵՍՏՄ-ի հետ ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրի ստորագրման ուղղությամբ:

2015 թվականի հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունը, տնտեսական և քաղաքական հիմնավորումներով, անդամակցել է ԵՍՏՄ-ին: Թե անդամակցությանը նախորդող ժամանակաշրջանում, թե Հայաստանի անդամակցությունից հետո ԵՍՏՄ անդամ երկրների միջև տարբեր մակարդակներով կնքվել են մի շարք պայմանագրեր կամ կայացվել որոշումներ (ֆինանսական համակարգերի ներդաշնակեցում, կոոպերատիվ կապերի խորացում, միասնական էներգետիկ շուկա և այլն), որոնք կարող են նպաստել տնտեսական ակտիվությանը և ինտեգրացիոն կապերի խորացմանը, փաստացի ընդլայնել պետությունների շուկաները, նպաստավոր պայմաններ ձևավորել ինչպես առկա տնտեսական ներուժը օգտագործելու և զարգացնելու, այնպես էլ միասնական շուկայի շնորհիվ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար:

Հայաստանի նման փոքր ներքին շուկա և տնտեսություն ունեցող երկրների դեպքում ինտեգրացիոն միավորումները նաև միջոց են, պատուհան՝ դեպի արտաքին աշխարհ, դեպի՝ նոր շուկաներ: Ասվածի վառ օրինակը կարող է լինել Իրանի Իսլամական Հանրապետության հետ ազատ առևտրի գոտու ստեղծման ժամանակավոր համաձայնագիրը:

Մկակիսացումից ի վեր հայկական կողմը շրջափակման պայմաններում մեծ ջանքեր է ներդրել Իրանի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման ուղղությամբ, սակայն երկար և ծանր բանակցություններից հետո էլ անկանխատեսելիորեն, այս կամ այն պատճառներով սառեցվում էր գործընթացը: Թեև Հայաստանի և Իրանի ժողովուրդները ունեն դարավոր հարաբերություններ և կապեր, այնուամենայնիվ իրանական կողմի համար տնտեսական տեսանկյունից մեծ գրավչություն չուներ հայկական շուկայի հետ ազատ տնտեսական գոտու ստեղծումը: Իրավիճակն այլ է ԵՏՄ-ի միասնական շուկայի դեպքում, քանի որ Իրանը ազատ առևտրի հնարավորություն է ունենալու ոչ թե 3 միլիոնանոց հայկական շուկայում, այլ 180 միլիոնանոց Եվրասիական միությունում:

ԵՏՄ անդամ երկրներից միայն Հայաստանն է, որն ունի ցամաքային սահման Իրանի Իսլամական Հանրապետության հետ, ավելի մոտիկից ծանոթ է իրանական տնտեսական քաղաքականությանը, ազգային և գործարար սովորույթներին, ապրանքներին, նրանց կողմից կիրարկվող կրոնական պահանջներին և այլն: Այս իրավիճակում միանշանակ էր, որ հայկական կողմը

պետք է ունենար մեծ դերակատարություն: Այնուհանդերձ, Իրանի հետ ազատ առևտրի գոտու ստեղծման բանակցությունները բավականին երկար տևեցին՝ մի քանի փուլերով: Հանդիպումները տեղի էին ունենում ԵՏՄ անդամ երկրներում և Իրանի Իսլամական Հանրապետությունում: Բանակցությունների ժամանակ ԵՏՄ անդամ յուրաքանչյուր երկիր ձգտում էր պաշտպանել իր ներքին շուկան և արտոնություն ստանալ արտահանման ժամանակ: Օրինակ՝ Բելառուսը դեմ էր իրանական կաթնամթերքի մաքսատուրքերը նվազեցնելուն, Ռուսաստանը դեմ էր խնձորի համար ցածր մաքսատուրքեր սահմանելուն, Հայաստանը և Ղրղզստանը փորձում էին սահմանափակել Իրանից բանջարեղենի ներմուծումը և այլն: Հայկական կողմը իր հերթին ձգտում էր ստանալ մի շարք ապրանքատեսակների մասով արտահանման արտոնություններ, մաքսատուրքերի նվազեցում. դրանք են՝ սիգարետ, պահածոներ, հանքային ջուր, գազավորված ըմպելիքներ, տավարի միս, տեքստիլ արտադրանք և այլն:

Եվ այսպես, բավական բարդ բանակացությունների արդյունքում 2018թ. մայիսի 17-ին Աստանայի տնտեսական համաժողովի շրջանակներում ստորագրվեց «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ առևտրի գոտու ձևավորմանը միտված ժամանակավոր համաձայնագիրը» (այսուհետ՝ Համաձայնագիր):

Այս փաստաթուղթն Իրանի և ԵՏՄ-ի միջև ազատ առևտրի գոտու ստեղծման առաջին փուլն է ներկայացնում: Ժամանակավոր համաձայնագիրը կնքվում է երեք տարի ժամկետով, որի ընթացքում կողմերը պետք է համաձայնության գան ազատ առևտրի գոտու մասին լիարժեք համաձայնագրի մասին:

Առավել բարենպաստ ռեժիմի ապահովման նպատակով Համաձայնագրով նախատեսվում են Կողմերի հորիզոնական պարտավորությունների, ազգային ռեժիմի, ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացների ժամանակ կիրառվող կանոնակարգերի թափանցիկություն, հստակություն, ինչպես նաև ընդհանուր առևտրում պաշտպանիչ միջոցների կիրառման ժա-

մանակ Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) նորմերի ապահովում:

Համաձայնագրում ամրագրվել է դրույթ, համաձայն որի սահմանի վրա իրանական կողմից գանձվող տուրքերի և վճարների չափը պետք է սահմանվի մատուցվող ծառայությունների գնին համապատասխան և չկիրառվի որպես ներքին արտադրողների համար սահմանված պաշտպանիչ միջոց կամ լրացուցիչ տուրք:

Այն ապրանքների մասով, որոնք ներառված են Համաձայնագրին կից ցանկերում, նախատեսված են դրույթներ, համաձայն որոնց Կողմերը պարտավորվում են չկիրառել քանակային սահմանափակումներ, իսկ տեխնիկական խոչընդոտների և սանիտարական, անասնաբուժական և ֆիտոսանիտարական միջոցների մասով՝ առաջնորդվել ԱՀԿ բազային սկզբունքներով:

Համաձայնագրի անբաժանելի մաս են հանդիսանում նաև կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների նկատմամբ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ, այսինքն՝ մաքսատուրքերի նվազեցում: Նշված ցանկերում ներառված են ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ արդյունաբերական ապրանքներ: Իրանական կողմին տրվել է 306 տասանիշ ԱՏԳ դասակարգման ապրանքների սակագնային արտոնություն, իսկ ԵԱՏՄ-ին՝ 303 ութանիշ դասակարգման ապրանքների սակագնային արտոնություն: Այսինքն՝ ի հաշիվ ութանիշ դասակարգման՝ ԵԱՏՄ-ի ավելի շատ ապրանքներ կունենան սակագնային արտոնություն: Միաժամանակ, ի տարբերություն ԵԱՏՄ-ի, իրանական կողմը զրոյական մաքսատուրքի որևէ արտոնություն չի տրամադրել:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կողմից մշակված ցանկում **Հավելված 1.**՝ հայկական կողմից ներկայացված առաջարկներում հիմնականում ներառված են Հայաստանի Հանրապետության արտահանման առաջնային հետաքրքրություն ունեցող ապրանքներ,որոնք ունեն նաև մեծ տեսակարար կշիռ Հայաստանի Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանման ծավալներում, մասնավորապես՝

- **տավարի միս** – մաքսատուրքը 26 տոկոսի փոխարեն լինելու է 10 տոկոս,
- **հանքային և գազավորված ջրեր, որոնք պարունակում են շաքարի կամ այլ քաղցրացնող կամ համաբուրավետիչ նյութեր, ոչ ոգելից խմիչքներ** – մաքսատուրքը 55 տոկոսի փոխարեն լինելու է 14 տոկոս,
- **դեղամիջոցներ** – մաքսատուրքը 37 տոկոսի փոխարեն լինելու է 18.5 տոկոս,
- **տրիկոտաժե արտադրանք** – մաքսատուրքը 55 տոկոսի փոխարեն լինելու է 38.5 տոկոս, և այլն:

Հարկ է նշել, որ **շոկոլադ և կակաո պարունակող մթնդամթերքի, հրուշակեղենի** մասով իրանական կողմը համաձայնել է տրամադրել մաքսատուրքի դրույքաչափի իջեցում, սակայն նույն ապրանքների մասով առաջարկվել է կիրառել փոխադարձ զիջումներ:

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) մաքսային համակարգի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ լիազոր մարմինը, ելնելով տնտեսական իրավիճակից, կարող է գերատեսչական հրամանով բարձրացնել և իջեցնել մաքսատուրքերը, ինչը անկանխատեսելիություն է հաղորդում ներմուծման գործընթացին: Իրավիճակը հստակեցնելու նպատակով որոշ ապրանքատեսակների մասով առաջարկվել է գործող մաքսատուրքի դրույքաչափի պահպանում (սառեցում): Նշված ցանկում հայկական կողմից հետաքրքրություն ունեցող ապրանքներից են **ոչխարի միսը**, **ձուկը՝ 5 տոկոս մաքսատուրք, մեղրը՝ 55 տոկոս մաքսատուրք**:



Փոխադարձ զիջումների արդյունքում՝ իրանական կողմից մշակված ցանկում Հավելված 2. ներառված են այնպիսի գյուղատնտեսական ապրանքներ, ինչպիսիք են կարտոֆիլը, լոլիկը, կաղամբը, վարունգը, խնձորը, լոլիկի մածուկը և խնձորի հյութը: Սույն ապրանքների ներմուծումը Հայաստան և/կամ ԵՍՏՄ անդամ մյուս երկրներ կխստացնի մրցակցությունը, տեղական արտադրողները պարտադրված կլինեն վերանայել իրենց արտադրատնտեսական քաղաքականությունը՝ հակառակ դեպքում իրանական ցածր գներով ապրանքները դուրս կմղեն շուկայից: 2018 թվակա-

նին նման իրավիճակ գրանցվեց ցեմենտի շուկայում, երբ իրանական ցեմենտը արժեզրկված թումանի և ցածր էներգակիրների գների պայմաններում հայկական ցեմենտ արտադրողներին մեծ հարված հասցրեց, և կառավարությունը պարտադրված էր ընդունել ներքին շուկայի պաշտպանության միջոցներ: Նման իրավիճակ հնարավոր է նաև այլ ապրանքային շուկաներում:

Համաձայնագիրը արդեն վավերացրել են բոլոր կողմերը, այն ուժի մեջ է մտել 2019 թվականի հոկտեմբերի 27-ին:

Ցավոք, հայկական կողմը ոչ թե նախապատրաստվում, այլ սպասում էր Համաձայնագրի ուժի մեջ մտնելուն: Առ այսօր առկա չեն տնտեսական նախագծեր, չկան կոնկրետ պայմանավորվածություններ, որոնք կարող են կարճ ժամկետներում կյանքի կոչվել:

Համաձայնագիրը միաժամանակ լայն հնարավորություններ է ընձեռում Հայաստանին և ԻԻՀ-ին ընդլայնել և խորացնել արտաքին տնտեսական հարաբերությունները: ԵՍՏՄ անդամ հանդիսացող Հայաստանը, ունենալով արտոնյալ առևտրային ռեժիմներ (GSP, GSP+) նաև Եվրամիության, ԱՄՆ-ի և այլ երկրների հետ, կարող է և պետք է դառնա կամուրջ իրանական ապրանքների համար: Օրինակ՝ ԻԻՀ-ից ներմուծված բանջարեղենը հնարավոր է վերամշակել Հայաստանում և արտահանել այլ երկրներ: Հայաստանում արտադրության կազմակերպումը առավել գրավիչ կդարձնի Մեղրիում տեղակայված ազատ տնտեսական գոտին, որտեղ գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտները կազատվեն մի շարք հարկատեսակներից:

Երկար սպասված Համաձայնագրից արդյունավետ օգտվելը պետք է դառնա Հայաստանի տնտեսական առաջնահերթություններից մեկը, և այս հանգրվանում նպատահարմար է իրականացնել հետևյալ քայլերը.

- Համաձայնագրից բխող սակագնային արտոնությունների մասին տեղեկատվություն տարածել՝ հստակ նշելով մաքսատուրքերի նվազեցումները,

- Համաձայնագրին կից հրապարակել նաև այլ երկրների կողմից Հայաստանին տրամադրված արտոնյալ առևտրային ռեժիմի (GSP, GSP+) տակ ընկնող ապրանքների ցանկը,

- Իրանահայերի մասնակցությամբ կազմակերպել բիզնես համաժողով՝ խրախուսելով հայ-իրանական կոոպերատիվ կապերի ստեղծումը,

- Պետության-մասնավոր համագործակցության շրջանակում ֆինանսավորել հայ-իրանական նոր բիզնես նախագծերը,

- Հայրենական արտադրությունը պաշտպանելու նպատակով՝ մշակել և կյանքի կոչել ոլորտային աջակցության պետական ծրագրեր՝ առաջնահերթ համարելով գյուղատնտեսությունը:

2017 թվականի համեմատ 2018 թվականին ՀՀ-ԻԻՀ ընդհանուր առևտրաշրջանառությունը աճել է 40,5 տոկոս: ԻԻՀ-ից ՀՀ ներմուծումը ավելացել է 54,2 տոկոս. զգալիորեն ավելացել են բնական գազի, ցեմենտի, նավթամթերքի ներկրման ծավալները, իսկ ՀՀ-ից ԻԻՀ արտահանումը ավելացել է 12 տոկոս (տես Աղյուսակներ 1., 2. և 3.):

Աղյուսակ 1. ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառություն, այդ թվում՝ ԻԻՀ-ի հետ (մլն ԱՄՆ դոլար)

ԵՐԿԻՐ	2015	2016	աճի տեմպ %	2017	աճի տեմպ %	2018	աճի տեմպ %	2018 հունվար-օգոստոս	2019 հունվար-օգոստոս	աճի տեմպ %
Ընդհանուր առևտրաշրջանառություն, այդ թվում՝	4724.6	5065.2	107.2	6334.8	125.1	7387.97	116.6	4750.2	4844.3	102.0
Ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ, այդ թվում՝	2142.7	2313.4	108.0	2854.3	123.4	3337.3	116.9	2106.83	2308.92	109.6
ԻԻՀ	**280.08**	**239.2**	**85.4**	**258.8**	**108.2**	**363.5**	**140.5**	**216.5**	**244.0**	**112.7**

Աղյուսակ 2. ՀՀ ներմուծում, այդ թվում՝ ԻԻՀ-ից (մլն ԱՄՆ դոլար) ըստ ծագման երկրի հատկանիշի

ԵՐԿԻՐ	2015	2016	աճի տեմպ %	2017	աճի տեմպ %	2018	աճի տեմպ %	2018 հունվար-օգոստոս	2019 հունվար-օգոստոս	աճի տեմպ %
Ընդհանուր ներմուծում, այդ թվում՝	3239.2	3273.5	101.1	4097.1	125.2	4975.54	121.4	3162.7	3184.1	100.7
Ոչ ԵՏՄ անդամ երկրներ, այդ թվում՝	1363.6	1413.4	103.7	1845.4	130.6	2327.3	126.1	1459.9	1530.85	104.9
ԻԻՀ	**198.4**	**164.0**	**82.7**	**174.70**	**106.5**	**269.34**	**154.2**	**153.58**	**191.33**	**124.6**

Աղյուսակ 3. ՀՀ-ից արտահանում, այդ թվում՝ ԻԻՀ (մլն ԱՄՆ դոլար)

ԵՐԿԻՐ	2015	2016	աճի տեմպ %	2017	աճի տեմպ %	2018	աճի տեմպ %	2018 հունվար-օգոստոս	2019 հունվար-օգոստոս	աճի տեմպ %
Ընդհանուր արտահանում, այդ թվում՝	1485.3	1791.7	120.6	2237.7	124.9	2412.43	107.8	1587.5	1660.2	104.6
Ոչ ԵՏՄ անդամ երկրներ, այդ թվում՝	779.1	900.0	115.5	1008.9	112.1	1010.0	100.1	646.93	778.07	120.3
ԻԻՀ	**81.72**	**75.23**	**92.1**	**84.1**	**111.8**	**94.2**	**112.0**	**62.9**	**52.7**	**83.7**

Աղյուսակներ 1, 2 և 3 կազմվել են ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալների

Ստահոգիչ է, որ 2019 թվականի հունվար-օգոստոս ամիսներին, 2018 թվականի միևնույն ժամանակահատվածի համեմատ, ՀՀ-ԻԻՀ ընդհանուր առևտրաշրջանառությունը աճել է 12.3 տոկոսով, որը ապահովվել է ի հաշիվ ԻԻՀ-ից ներմուծման 24.6 տոկոս աճի, իսկ դեպի ԻԻՀ արտահանումը նվազել է 16.7 տոկոս, որը հիմնականում բացատրվում է 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների 36.4 տոկոսով կրճատմամբ (տես Ցանկեր 1. և 2.):

ԵՍՏՄ և ԻԻՀ միջև ազատ առևտրի գոտու ձևավորմանը միտված ժամանակավոր համաձայնագիրը կոչված է ամրապնդել հյուսիս-հարավ ռազմավարական դաշնակցային հարաբերությունները, առավել հզորացնել մեր տարածաշրջանի տնտեսական գրավչությունը և բարձրացնել անվտանգության մակարդակը:

Ցանկ 1. 2018-2019թթ. առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանված 10 առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներ (հազ. ԱՄՆ դոլար)

ՍՏԳ ԱՄ ծածկագիր	Ապրանքի անվանումը	չ/մ	2018թ I կիս.		2019թ I կիս.		աճի տեմպ %	տեսակարար կշիռ %
			քանակ	մ.արժեք	քանակ	մ.արժեք		
	Ընդամենը՝ այդ թվում			49555.9		33598.5	67.8	
2716	Էլեկտրաէներգիա	մլն կվտ/ժ	928.5	46413.2	538.3	29499.6	63.6	87.8
8548	Թափոն և ջարդոն սկզբնական տարրերի, մարտկոցի և էլեկտրական կուտակիչի	հազ. հատ	89.3	737.6	106.9	1389.2	188.3	4.1
2403	Ծխախոտի այլ պատրաստուկ և փոխարինիչ; խտահյութ	տոննա	0.0	0.0	8.8	424.7	-	1.3
7204	Թափոն և ջարդոն սև մետաղի; շիխտային ձուլակտոր	տոննա	0.0	0.0	1519.6	311.1	-	0.9
0204	Ոչխարի կամ այծի միս	տոննա	235.7	1203.0	45.1	292.1	24.3	0.9
3603	Քուղեր՝ բիքֆորդյան, ճայթեցնող; հրապատիճ; բռնկիչ; էլեկտրաճայթիչ	հազ. հատ	155.4	149.2	258.3	248.0	166.2	0.7
8431	Սասեր, 8425-8430 դիրքերի սարքավորումների համար	տոննա	0.0	0.0	8.1	187.6	-	0.6
8481	Ծորակ, կափույր և նման ամրան խողովակատարի, կաթսայի, ջրամբարի կամ նման տարողության համար	կգ	0.0	0.0	412.5	107.9	-	0.3
7602	Թափոն և ջարդոն ալյումինի	տոննա	0.0	0.0	80.4	83.6	-	0.2
8413	Պոմպ; վերհան՝ հեղուկի	կգ	0.0	0.0	105.3	82.6	-	0.2

Ցանկ 2. 2018-2019թթ. առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետություն Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծված 10 առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներ (հազ. ԱՄՆ դոլար)

ԱՏԳ ԱՄ ծածկագիր	Ապրանքի անվանումը	չ/մ	2018թ I կիս.		2019թ I կիս.		աճի տեմպ %	տեսակարար կշիռ %
			քանակ	մաքսային արժեք	քանակ	մաքսային արժեք		
	Ընդամենը՝ այդ թվում			102893.4		132351.3	128.6	
2711	Գազ բնական և հեղուկ	հազ. խմ	195246.5	29287.0	118031.0	24648.3	84.2	18.6
2523	Ցեմենտ	տոննա	39579.3	4055.8	144437.3	22440.8	5.5 անգ.	17.0
2710	Նավթ և նավթամթերք՝ ոչ հում	տոննա	2081.7	1805.4	8401.1	6870.9	3.8 անգ.	5.2
3901	Պոլիմերներ էթիլենի, սկզբնական ձևերով	տոննա	5055.8	7296.3	4754.0	6279.8	86.1	4.7
2713	Կոքս, բիտում և նավթամթերքի վերամշակումից այլ մնացորդ	տոննա	15276.8	5368.9	12446.9	4273.9	79.6	3.2
6907	Սալիկներ երեսպատման խեցեգործ՝ չջնարակած	հազ. քմ	1179.1	4673.5	1455.6	4072.5	87.1	3.1
7210	Հարթ գլանվածք երկաթից; ածխածնային պողպատից >=600մմ, պատվածքով	տոննա	3857.6	3114.5	5185.9	3560.5	114.3	2.7
3102	Պարարտանյութեր հանքային կամ քիմիական, ազոտական	տ (N)	2182.9	1914.8	48998.9	3237.1	169.1	2.4
7306	Խողովակ, փողակ և տրամատ մնամեջ այլ, սև մետաղից	տոննա	955.5	582.1	5823.9	2903.6	5 անգ.	2.2
7202	Երկաթահամահալվածք	տոննա	2014.7	3102.8	2297.6	2644.0	85.2	2.0

Ցանկեր 1 և 2 կազմվել են ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակված տվյալների

ԵՍՏՄ կողմից Իրանի հետ կնքված համաձայնագիրը բացառիկ հնարավորություն է Հայաստանի համար երկրի տնտեսությունը հասցնել բոլորովին այլ մակարդակի: Սա հնարավորություն է, որից օգտվելու համար անհրաժեշտ է երկրի առջև դրված խնդիրների գիտակցում, դրանք լուծելու հստակ ռազմավարություն, կոնկրետ գործողությունների իրականացման ժամանակացույց, ինչպես նաև համապատասխան բարձրակարգ կառավարիչ թիմ, որը ունակ է ամենօրյա քրտնաջան աշխատանքի միջոցով որակապես նոր շունչ հաղորդել երկրի տնտեսական քաղաքականությանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերլուծություն 1

Կարագի գնի բարձրացման պատճառները:
Մենաշնորհների դեմ պայքարի մեխանիզմները:

Վերլուծություն 2

Վառելիքային շուկայի առկա հիմնախնդիրները
և հնարավոր լուծման ուղիները ՀՀ-ում:

Վերլուծություն 3

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային
ծրագրի առկա վիճակը և խնդիրները:

Վերլուծություն 4

Մանրածախ առևտրի համակենտրոնացման
միտումները ՀՀ-ում:

Վերլուծություն 5

Պարտադիր կուտակային կենսաթոշակային
համակարգի մասին

Վերլուծություն 6

Հայաստանում աշխատանքային իրավունքների
պաշտպանություն. բացահայտված խնդիրներ
և մտահոգիչ դրսևորումներ, հնարավոր լուծումներ

ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հրայր Մարուխյան Հիմնադրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2009թ.-ին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայաստանի Գերագույն Սարմնի կողմից: Այն հանդիսանում է շահույթ չհետապնդող հիմնադրամ, որի նպատակն է հանրային, քաղաքական խնդիրների լուծման առաջխաղացումն ու զարգացումը, որոնք նպաստում են սոցիալական ժողովրդավարության հիմնական արժեքների տարածմանը՝ կրթական եւ ուսումնական ծրագրերի, ուսումնասիրությունների եւ տարածաշրջանային ու միջազգային համագործակցության միջոցով:
www.maroukhianfoundation.org/am/
www.facebook.com/HrayrMaroukhianfoundation/

ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակը կազմավորվել է 2017 թվականի ամռան ընթացքում: Գրասենյակի գործունեության հիմնական նպատակն է Հայ Յեղափոխական Դաշնակցության քաղաքական և սոցիալ-տնտեսական մարտավարության մշակումը և իրագործման մշտադիտարկումը (մոնիտորինգը):